

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
2020 ԹՎԱԿԱՆ**

ՀԱԱՀ-ն շարունակել է համագործակցությունը արտասահմանյան համալսարանների և կազմակերպությունների հետ՝ շեշտադրելով համագործակցության արդյունավետ ոլորտները, վերհանելով առկա խնդիրները և հնարավորությունները, ամրապնդելով և ստեղծելով համագործակցային նոր կապեր: Համալսարանում շարունակվել են աշխատանքները ուսանողների և դասախոսների շրջանում միջազգային շարժունության ծրագրերի մասնակցության, նոր դրամաշնորհային ծրագրերի ներկայացման հետ կապված հետաքրքրվածության բարձրացման ուղղությամբ: ՀԱԱՀ պաշտոնական կայքի Միջազգային կապերի դեպարտամենտին վերաբերվող բաժինը և Միջազգային կապերի դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջը շարունակաբար համապարփակ տեղեկատվություն են տրամադրել միջազգային շարժունության ծրագրերի մասնակցության հնարավորությունների, մասնակիցների միջազգային փորձի, կարողությունների զարգացման ծրագրերի արդյունքերի և մի շարք այլ հնարավորությունների վերաբերյալ: ՄԿԴ-ի կողմից տեղեկատվության տարածումն ու մրցույթների անցկացման թափանցիկության բարձրացումը շարունակում են լինել գերակա նպատակներ և դեպարտամենտը շարունակում է օգտագործել տեղեկատվության տարածման բոլոր հասանելի միջոցները: Իսկ մրցույթները կազմակերպվում են հատուկ հանձնաժողովով և ընթացակարգերով՝ գործընթացների անաչառությունն ապահովելու նպատակով:

Ամբողջ աշխարհում առկա համավարակի պայմաններում Միջազգային կապերի դեպարտամենտը շարունակական կապի մեջ է եղել արտասահմանում ուսանող ՀԱԱՀ ուսանողների և արտասահմանյան գործընկերների հետ, քննարկվել են առցանց դասընթացների կազմակերպման հետ կապված հարցերը, վերհանվել են առկա հնարավորությունները և խնդիրները՝ ուսանողների ուսման և կրեդիտների կուտակման գործընթացը սահուն կազմակերպելու համար: ՄԿԴ-ն շարունակել է միջազգային գործընթացներին, ուսանողների, աշխատակիցների շարժունությանը վերաբերվող

առցանց փաստաթղթային բազան վերամշակելու աշխատանքները, որի առկայությունը հատկապես ներկայիս պայմաններում կարևոր է համալսարանի միջազգային գործընթացների սահուն, անխափան կազմակերպման համար:

ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. Ներդնել օտար լեզվով դասավանդվող մասնագիտություններ /առարկաներ, համապատասխան ուսումնական ծրագիր ՀԱԱՀ- ում արտասահմանյան ուսանողների ներգրավման, ուսման կազմակերպման համար:
2. Ստեղծել գրավիչ պայմաններ արտասահմանցի ուսանողների ներգրավման համար՝ լուծելով նրանց կացության հետ կապված հարցերը:
3. Անհրաժեշտության դեպքում և ժամանակի պահանջներին համապատասխան ապահովել անխափան առցանց ուսուցում ներգնա, արտագնա ուսանողների համար:
4. Մշակել շարժունության մասնակցիների շարժունության արդյունքների ներդրման արդյունավետ մեխանիզմներ:
5. Դասախոսների շրջանում ուժեղացնել կարողությունների զարգացման ծրագրեր գրելու, հայտեր պատրաստելու հմտություններ և կարողություններ:

Շարժունության ավարտից հետո ՄԿԴ-նպարտադիր կերպով առցանց հարցումներ է իրականացնում շարժունության մասնակիցների շրջանում՝ վերլուծելով արդյունքները փորձում է խնդիրներին տալ ճշգրիտ լուծումներ, որը կարևոր գործընթաց է սեփական կարիքները վերհանելու, հնարավորությունները հաշվի առնելու, ուժեղ և թույլ կողմերը գնահատելու համար:

S (strenghts)	W (weaknesses)
<ul style="list-style-type: none"> • համալսարանիակտիվ միջազգայնացման գործընթաց • միջազգային փոխանակման բազմաողորտ նախագծերի առկայություն • Ուսանողների, աշխատակիցների 	<ul style="list-style-type: none"> • Օտարերկրյա ուսանողների բացակայություն, նրանց համար մշակված և հստակեցված ուսումնական ծրագրերի, ընդունելության կարգի, համապատասխան վարձավճարների

<p>ակտիվ մասնակցություն միջազգային փոխանակման ծրագրերին</p> <ul style="list-style-type: none"> • միջազգային կարողությունների զարգացման նոր ծրագրեր • միջազգային գործընթացներ, ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն, թափանցիկ գործունեություն, հաշվետվողականություն • դեպարտամենտի աշխատակիցների ակտիվ գործունեություն 	<p>մասին տեղեկատվության բացակայություն</p> <ul style="list-style-type: none"> • կրեդիտների փոխճանաչման հստակ մեխանիզմների բացակայություն • աշխատակիցների ոչ բավարար ներգրավվածություն միջազգային կարողությունների զարգացման ծրագրերում • ոչ բավարար կենցաղային պայմաններ ՀԱԱՀ հանրակացարանում • ոչ բավարար սեփական ֆինանսական միջոցներ
<ul style="list-style-type: none"> • O (opportunities) 	<p>T (threats)</p>
<ul style="list-style-type: none"> • ագրոտեխնոլոգիական ոլորտի միակ բուհը ՀՀ-ում • բուհի միջազգային ավելի բարձր ճանաչելիություն • միջազգայնացման ոլորտում հստակ ձևավորված առաքելություն, միջազգային հավակնություններ • օտար լեզվով ամառային դպրոցներ, երկարաժամկետ և կարճաժամկետ դասընթացներ • ուսանողների դասախոսների շրջանում օտար լեզվի իմացության բարելավում • ագրոտեխնոլոգիական ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից 	<ul style="list-style-type: none"> • տեղական ուսանողների թվաքանակի նվազում • որոշ ԵՄ համալսարանների կողմից խնդիրներին ոչ պատշաճ ժամանակին արձագանքում, • հյուրընկալող համալսարանում օտար լեզվով համապատասխան դասընթացների բացակայություն • հյուրընկալող համալսարանի կողմից ուսանողի մեկնումից հետո առարկաների հիմնովին փոփոխություն